ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380250
Էլ. փոստ armen.gevorgyan@justice.am

№ 10/16.2/9988-15
«17» 08 2015 թ.

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ձեր՝ 2015 թվականի օգոստոսի 10-ի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն հասցեագրված թիվ 258-1-ի գրության կապակցությամբ՝ հայտնում եմ, որ ի կատարումն ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի «Բաց կառավարման գործընկերություն» Նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության երկրորդ գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» N 32 արձանագրային որոշման Հավելվածի 2-րդ բաժնի 8-րդ կետի՝ պետական կառավարման մարմինների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման ընդհանուր առցանց հարթակի ստեղծման նպատակով ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 296-ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որն ուղղված է գերատեսչությունների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի մասին հանրության իրազեկմանը և քաղաքացիական հասարակությանը նախագծերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու, ինչպես նաև դրանց կարգավիճակի վերաբերյալ տեղեկանալու հնարավորության ընձեռնմանը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 296-ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման

նախագիծը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի օգոստոսի 14-ի թիվ 02/19.1/9959-15 ելից գրությամբ ուղարկվել է շահագրգիռ մարմիններին՝ առաջարկություններ և դիտողություններ ստանալու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Կատարող՝ Ս. Միքայելյան
ՀՀ ԱՆ կազմակերպական-իրավական վարչություն
հեռ.՝ 31-91-17